ՀՀ Շիրակի մարզի
«Ամասիայի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի

Զարգացման ծրագիր
2023-2028թթ

«Հզոր դպրոց, որակյալ կրթություն՝ ուժեղ հասարակություն»

Բովանդակություն

Հաստատության գործունեությունը----------3

Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմ----------5

Նպատակների և խնդիրների սահմանումը----------13

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացո----------19

Զարգացման ծրագրի իրականացման պատասխանատուները----------22

Արդյունքների գնահատման չափանիշները----------23

Վերահսկողության մեխանիզմները----------27

Ռիսկերը----------28

Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները----------30

Հաստատության գործունեությունը

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն, գործունեություն ծավալելիս, ունի մեկ գլխավոր նպատակ՝ այն է ապահովել որակյալ կրթություն:

Հանրակրթության էական բարեփոխումները և առաջանցիկ զարգացումները դառնում են անհրաժեշտ և անխուսափելի, աճում է հանրակրթության դերը, և կրթությունը վերաճում է հասարակության մեջ մարդու դերի արժևորումը ապահովող կարևորագույն և կենտրոնական մարմնի՝ զարգացնելով

- համակեցության
- հանդուրժողականության
- համագործակցության կարևորագույն որակներ:

Հանրակրթական ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այդ նպատակով սկիզբ է դրվում բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝

- մարդկային ռեսուրսները,
- ծրագրամեթոդական ապահովումը,
- նորմատիվ իրավական դաշտը:

Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.

ա/ ապահովելու որակյալ կրթություն

բ/ բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը

գ/ կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետական և միջազգային չափորոշիչներին:

Կրթական բարենպաստ միջավայրի անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Կրթության բարելավումը խորը, բազմագործոն և ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար անհրաժեշտ է ներդնել ջանք եռանդ և համառություն: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է աշխատանքները պլանավորել և համակարգել: Հենց սրա համար է մեզ անհրաժեշտ կազմել դպրոցի հաշվետու ժամանակահատվածի համար զարգացման ծրագիր: Այն կօգնի հստակություն մտցնել աշխատանքներում և կանոնակարգել քայլերի հաջորդականությունը:

Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցի գործունեությանը ավելի մանրամասն ծանոթանալու և առկա իրավիճակը գնահատելու, խնդիրների բացահայտման համար իրականացվել են որոշակի փաստաթղթային ուսումնասիրություններ,կազմակերպվել են հանդիպումներ դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:

Ուսումնասիրությունների և հանդիպումների արդյունքում բացահայտվածը ներկայացնեմ ստորև:

Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ դպրոց/ շահույթ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական ընդհանուր, և ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հասատատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ի դեմս ՀՀ կառավարության: Դպրոցը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 2003 թվականին: Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 13.03.2013թ. №190-Ա/Ք հրամանի տրված է լիցենզիա № 0935, 0939, 0760:

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ամասիա, բնակավայր Ամասիա 24 փողոց 1-ին փակուղի օբյեկտ 3: Դպրոցն ունի 2 մասնաշենք, այն տեղակայված է հարմարեցված շենքում՝ կառուցված 1980թ. ունի 2 մասնաշենք: Դպրոցի շենքը տիպային չէ, որոշ դասասենյակների մակերեսը փոքր է սահմանվածից, ունի վթարային վիճակում գտնվող ապաստարան:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, շտամպ և այլ միջոցներ: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

· Տարրական ընդհանուր - 92 սահմանային տեղով

· Հիմնական ընդհանուր - 100 սահմանային տեղով

· Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն - 60 սահմանային տեղով

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցում առկա են 12 դասասենյակ, 3 առարկայական կաբինետ, 2 լաբորատորիա (քիմիա, ֆիզիկա) 1 «Արմաթ» լաբորատորիա, բուժկետ, 4 առանձնասենյակ, ճաշարան, գրադարան, հանդիսությունների սրահ և մարզադահլիճ: Մարզադահլիճի գույքը գտնվում է անմխիթար վիճակում, այն չի բավարարում արդի պահանջներին, բացակայում է ջեռուցման համակարգը, հանդերձարանները գտնվում են անմխիթար վիճակում: Լաբորատորիաների գույքը, նյութերը, սարքավորումները բավարար չեն դպրոցի պահանջների համար:

2022-2023 ուստարում դպրոցն ունի 12 դասարան, որտեղ սովորում են թվով 214 աշակերտ, որից 3-ը կրթության առանձնահատուկ պայմաններով սովորող: Այսինքն դպրոցն աշխատում է մոտ 85% բեռնվածությամբ:

Դպրոցը միահերթ է և աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Որակյալ կրթության ապահովումը կրթական հաստատության առաջնային խնդիրն է: Դպրոցում ուսումնական միջավայրի ու կրթության որակի գնահատման հիմնական չափանիշ դիտարկենք աշակերտների առաջադիմության մակարդակը: Ստորև ներկայացնեմ դպրոցի աշակերտների առաջադիմության վերջին հինգ տարվա ցուցանիշները.



Ինչպես երևում է գծապատկերից, լավ և գերազանց գնահատականներ ունեցող աշակերտների կշիռը բավական ցածր է դիտարկված բոլոր տարիներին: Բացի այդ, այն տարեցտարի նվազման միտում ունի: Այսպես, 2023թ. 1-ին կիսամյակի տվյալներով՝ գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների կշիռն ընդհանուր աշակերնտերի մեջ ընդամենը 3,3 % է, իսկ լավ առաջադիմություն ունեցողներինը՝ 30,8%: Աշակերտների գերակշիռ մեծամասնությունը՝ 65,9 %-ն ունեն բավարար կամ վատ առաջադիմություն:



Հատկանշական է արձանագրել, որ դպրոցում ուսումնական միջավայրը չի մոտիվացնում աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Աշակերտները լուրջ չեն մոտենում կրթությանը, իրենց հնարավորություններին համապատասխան չեն ուզում սովորել, միայն բավարարվում են անցողիկ գնահատականի ստացմամբ: Այդպիսի աշակերտների նկատմամբ ուսուցիչների պահանջներն էլ են նվազում, արդյունքում առկա է կրթության ցածր որակ:

Դպրոցում դասավանդում են 25 ուսուցիչ: Նրանցից ոչ մեկը չունի տարակարգ, իսկ կամավոր ատեստավորում անցել է ընդամենը մեկ ուսուցիչ կամ դասավանդող ուսուցիչների 4%-ը: Այս պահի դրությամբ ուսուցիչների որակավորումը բարձրացնելու համար լրացուցիչ միջոցառումներ են իրականացվում դպրոցի կողմից: Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներն են՝ մասնակցություն պարտադիր վերապատրաստումներին : Մանկավարժական ուսումնական համակազմից ունենք մեկ ուսուցիչ կամավոր ատեստավորման մասնակցած 60 միավորով: Այս տարի ևս երեք հայտ է ներկայացվել կամավոր ատեստավորման, մյուս մանկավարժների մոտ կա անհրաժեշտություն մեծացնել շահագրգռվածությունը ատեստավորվելու: Մանկավարժները մասնակցել են առարկայական վերապատրաստումներին, անցել են նաև նոր կրթական չափորոշիչներով ուսուցում:

Աշխատակազմի արժևորման ու խրախուսման միջոցառումների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ միայն 2022թ-ից սկսված՝ ուսումնական տարվա ընթացքում լավագույն արդյունքներ գրանցած ուսուցիչներին տրվել են շնորհակալագրեր, ինչպես նաև դրամական պարգևատրում (ֆիզկուլտուրայի ուսուցչին աշխատավարձի 100%-ի չափ), սակայն մինչ այդ դպրոցում խրախուսման որևէ միջոցառում չի իրականացվել: Անհրաժեշտություն կա ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ուսուցիչների խրախուսման ու պարգևատրման, ինքնակրթության հնարավորությունների ստեղծման մեխանիզմները:

Դպրոցի կառավարման մարմիններն են՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Շիրակի մարզպետարանը, Հաստատության կառավարման խորհուրդը և տնօրենը։ Հաստատության խորհրդակցական մարմիններ են աշակերտական խորհուրդը, ծնողական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը և գործող առարկայական մասնախմբերը։ Դպրոցի տնօրենի և կառավարման խորհրդի միջև առկա են նորմալ հարաբերություններ, սակայն դրանք ինստիտուցիոնալացված համագործակցության փոխարկելու անհրաժեշտություն կա։ Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ գտնվում է սաղմնային փուլում, առկա են որոշակի մեխանիզմներ, սակայն դրանք ինստիտուցիոնալացված չեն։

ՏԻՄ-ի հետ շարունակական համագործակցությունը պասիվ է, սակայն լինելով գյուղական դպրոց՝ կրթությունը կազմակերպում ենք՝ հիմնականում ելնելով համայնքի կարիքներից։ Դպրոցում առկա է մեկ նախադեպ՝ ԱՅԲ և Յունիսեֆ կազմակերպության ուսուցիչների կարողությունների և հմտությունների զարգացման դասընթացի ավարտին ներկայացված նախագծային աշխատանքը <<Պարարտանյութերի և թունաքիմիկատների սխալ օգտագործումը և չարաշահումը գյուղատնտեսության մեջ>>, որը կատարվել է տարբեր վայրերի հողի նմուշառում և փորձաքննություն դպրոցի ֆինանսական միջոցներով։ Արդյունքներն արդեն ներդրվելու են համայնքի կարիքների համար։

Դպրոցը համագործակցում է «Հայկական Կարիտաս», «Վորլդ Վիժն» , «Հայկական Կարմիր խաչ» ՀԿ-ների և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի հետ։ Կարող ենք փաստել, որ նշված համագործակցության փորձը սակավ է, քանի որ ներկայումս կրթության ոլորտում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրեր իրականացնող կազմակերպություններ, որոնց հետ դպրոցը որևէ կերպ չի համագործակցում։

Դպրոցի աշակերտները նաև մասնակցություն են ցուցաբերում տարբեր սպորտային միջոցառումների և գրանցում որոշ հաջողություններ։ Դրանց թվում են

սպորտլանդիաներ, բազկամարտի առաջնություն, սեղանի թենիսի առաջնություն, ֆուտբոլի առաջնություն (աղջիկներ), հնգամարտ:

Աշակերտները մասնակցում են սպորտային առաջնությունների, ինչպես նաև մի շարք ինտելեկտուալ մրցույթների, ինչպիսիք են շախմատի մրցաշար, «Մեղու», «Կենգուրու», «Ինչ, որտեղ, երբ», <<Խորանարդ>> դպրոցական բանավեճեր: Սակայն պետք է արձանագրել, որ նշված մրցույթներում դպրոցի մասնակիցները լուրջ հաջողություններ չեն ունենում: Այսպես, Կենգուրու մրցույթին 2022թ-ին դպրոցն ունեցել է ընդամենը մեկ մրցանակակիր, «Մեղու» մրցույթին՝ հանրապետական փուլ անցած մեկ մասնակից: «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից կազմակերպված բանավեճի մրցաշարին դպրոցի թիմը միայն մեկ անգամ գրավել է 2-րդ տեղը:

Դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցում են բոլոր դպրոցական և համադպրոցական միջոցառումներին:

2023թ.-ին հանրապետության երեք հաղթող կա սամբոյի դպրոցականների առաջնությունում, որոնք մեկնելու են Նովգորոդում անցկացվելիք մրցումներին մասնակցելու: Աշակերտները մասնակցում են նաև առարկայական օլիմպիադաների:

Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները նորարարություններ կիրառելու համար չեն բավականացնում : Մինչ այժմ դպրոցում տեխնոլոգիաների կիրառումը որոշ դասերի ժամանակ սահմանափակվում է որոշակի ՏՀՏ միջոցների կիրառմամբ՝ օրինակ սլայդերի միջոցով դասի ներկայացում: Ժամանակակից միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ են նոր սերնդի սարքավորումներ և էլեկտրոնային գրատախտակ :Ընդհանուր առմամբ, շենքային պայմանները և տեխնիկական հագեցվածությունը բավարար չեն ժամանակակից մեթոդներով դասերը անցկացնելու համար: Որոշ ուսուցիչներ համակարգչային դասարանում (որտեղ առկա են ընդամենը 10 համակարգիչներ) կազմակերպում են տեխնիկական միջոցներով դասեր:

Դպրոցի կողմից կատարված ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին պլանային ցուցանիշներից շեղումները մեծ կշիռ չի ունեցել։ Բյուջետային ծախսերի օպտիմալ օգտագործումը հատկապես վերջին 2 տարվա ընթացքում հնարավորություն է ընձեռել կատարել խնայողություններ, ինչը նախատեսվում է օգտագործել սույն զարգացման ծրագրով սահմանված նպատակների ու խնդիրների իրագործման համար։

Հաշվի առնելով նկարագրված իրավիճակը՝ ներկայացնենք դպրոցի ուժեղ և թույլ կողմերը։

Այսպես, մեր ուսումնասիրության արդյունքում դպրոցի **ուժեղ կողմերն** են.

- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը և դրանց պատշաճ կիրառում,
- Համագործակցության որոշակի փորձ կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ,
- Դպրոցում բարոյահոգեբանական բարձր մթնոլորտի առկայություն,
- Ակտիվ մասնակցություն և ձեռքբերումների առկայություն սպորտի ոլորտում,
- Սպորտային և հանդիսությունների դահլիճների առկայություն.
- Ինտելեկտուալ միջոցառումներին ակտիվ մասնակցություն

Անդրադառնանք դպրոցի **թույլ կողմերին**

- աշակերտների ցածր առաջադիմություն
- օլիմպիադաներին պասիվ մասնակցություն և արդյունքների ցածր մակարդակ
- նյութատեխնիկական բազայի ապահովվածության ցածր մակարդակ
- շենքային ոչ բարվոք պայմաններ
- դպրոցի կառավարմանը և ընթացիկ աշխատանքներին մասնակցայնության ցածր մակարդակ խորհրդակցական մարմինների կողմից։
- Ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը,
- Արտաքին համագործակցության ցածր մակարդակ համայնքի հետ
- Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների բացակայություն
- Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակասը
- ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման ցածր մակարդակը
- Տարերային խոշոր աղետների դեպքում վտանգների առկայություն
- Ծնողական համայնքի կողմից դպրոցի աշխատանքներին դժվար ընդգրկում

Վերոնշյալ ուսումնասիրության արդյունքում բացահայտված հիմնախնդիրների համախումբը կարելի է դասակարգել հիմնականում 3 ուղղությամբ՝

-կրթության որակի ու ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված հիմնախնդիրներ

-դպրոցի նյութատեխնիկական ու շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրներ

-դպրոցի գործունեությանն ու կառավարմանը՝ խորհրդի և խորհրդակցական մարմինների մասնակցայնության բարձրացման հիմնախնդիրներ

Նպատակների և խնդիրների սահմանումը

Դպրոցի գործունեությունն ամբողջությամբ ուղղված է լինելու կրթության բնագավառում պետական քաղաքականության ապահովմանը դպրոցում, համաձայն որի քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Նշված նպատակներին ու քաղաքականության ուղղությունների իրականացմանն ուղղված է լինելու առաջարկվող զարգացման ծրագիրը:

Զարգացման ծրագրի մշակման փուլից սկսած՝ դպրոցի ամբողջ գործունեությունը միտված է լինելու Ամասիա համայնքի, դպրոցի աշակերտների, նրանց ծնողների կարիքներին համապատասխանեցմանն ու հնարավորությունների, ներուժի ամբողջական օգտագործմանը: Դպրոցի զարգացման ծրագիրն ու նախատեսվող գործունեությունն ամբողջությամբ համապատասխանում է առկա ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսների ներուժին և հնարավորություններին:

Զարգացման ծրագրի շրջանակներում առաջադրվել են հետևյալ նպատակները, խնդիրները, արդյունքները և մշակվել են դրանց ստացմանն ուղղված գործողությունները՝

Նպատակ 1. Ամասիայի միջնակարգ դպրոցում 5 տարիների ընթացքում ապահովել կրթության որակի շարունակական բարելավմանն ուղղված նպաստավոր միջավայր

Խնդիր 1.1. Դպրոցում սովորողների առաջադիմության բարելավում, ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատում և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավում:

Արդյունք 1.1.1.

Առաջին ուստարում նվազագույնը կրկնապատկել գերազանց սովորողների թիվը։ Դրանից հետո յուրաքանչյուր տարի նվազագույնը 30%-ով ավելացնել գերազանց առաջադիմություն ունեցողների թիվը։ Այս տեմպով 5 տարուց կունենանք նվազագույնը 40 գերազանց սովորող աշակերտ։

Արդյունք 1.1. 2-5 տարիների ընթացքում եռապատկել «լավ» առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը՝ յուրաքանչյուր տարում ավելացնելով նրանց թիվը 40 տոկոսով։

Խնդիր 1.2. Մանկավարժական աշխատողների ընտրության, նրանց աջակցության և զարգացման համակարգի ներդրում և շարունակական բարելավում։

Արդյունք 1.2.1. 2023-2028թթ, յուրաքանչյուր տարի նախորդ տարվա նկատմամբ ատեստավորման մասնակիցների թիվն ավելացնել 20 տոկոսով։

Գործողություններ

Ձևավորել առարկայական պարապմունքների խմբակներ

Ըստ հետաքրքրությունների ներգրավել աշակերտների։ Խմբակներում կանցկացվեն առարկայական օլիմպիադաների ժամանակ կիրառվող խնդիրների, վարժությունների, առաջադրանքների վերաբերյալ պարապմունքներ ։

Յուրաքանչյուր խմբակ կվարի տվյալ առարկայի ուսուցիչը։ Ուսուցիչները կպարգևատրվեն ըստ կիսամյակային արդյունքների։

Ստեղծել ուսումնական որակի հանձնաժողով

Այն իրենից ենթադրում է աշակերտների առաջադիմությունը վերահսկող մարմին։ Հանձնաժողովի կազմում լինելու են ներկայացուցիչներ ուսուցչական կազմից, աշակերտական խորհրդից և ծնողական խորհրդից։ Հանձնաժողովը ձևավորվելու է յուրաքանչյուր տարի։ Յուրաքանչյուր կառույց ընտրելու է իր ներկայացուցչին։

Հանձնաժողովի գործունեության նպատակն է ուսումնասիրել և բացահայտել այն աշակերտներին, ովքեր մյուս առարկաների համեմատությամբ թերանում են որոշ առարկաներից: Այդ աշակերտները կներգրավվեն համապատասխան առարկայական խմբակների պարապմունքներին:

Հանձնաժողովը հաշվետու կլինի խորհրդակցական և կառավարման մարմիններին:

Ուսուցիչների մասնագիտական որակի զարգացման կենտրոնի ստեղծում

Կենտրոնի նպատակն է լինելու կազմակերպել տարբեր միջոցառումներ, հանդիպումներ, որոնք կնպաստեն ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացմանը:

Կենտրոնը ձևավորելու և համակարգելու են ուսուցիչները: Կազմակերպվելու են մասնագիտական և մեթոդական դասընթացներ: Նաև հանդիպումներ են կազմակերպվելու ոլորտային փորձագետների հետ ուսուցիչների տարակարգի և ատեստավորման առավելությունների և մասնակցության կարգի վերաբերյալ: Այս ամենը կմոտիվացնեն ուսուցիչներին և հուսանք շատերը ցանկություն կհայտնեն կամավոր ատեստավորմանը մասնակցելու, ինչպես նաև տարակարգ ունենալու:

Հաստատությունում պարբերաբար դասալսումների իրականացում տնօրենի և փոխտնօրենի կողմից,

Դասալսումների արդյունքների քննարկում առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ,

Հաստատության միջոցներով ուսուցիչներին ժամանակ առ ժամանակ ուղարկել ժամանակակից վերապատրաստման առցանց ու անցանց դասընթացների,

Դպրոցում պարբերաբար իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Նպատակ 1-ի արդյունքների համար պատասխանատուներն են՝

Կառավարման խորհրդի նախագահ, տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, ծնողական խորհրդի նախագահ, աշակերտական խորհրդի նախագահ, առարկայական մասնախմբեր։

Նպատակ 2. Դպրոցի ենթակառուցվածքների զարգացում

Խնդիր 2.1. 2023-2028թթ. ընթացքում դպրոցի շենքային պայմանների բարելավում

Արդյունք 2.1.1. Դպրոցի շենքային պայմանները բարելավված են և ամբողջությամբ բավարարում են պետության կողմից սահմանված չափանիշներին

Գործողություններ

Շենքային պայմանների ուսումնասիրություն

Վերանորոգման կարիք ունեցող սենյակների քանակի ու պահանջի որոշում

Նախահաշիվների կազմում, բոլոր անհրաժեշտ ծախսերի հաշվարկ

Ըստ առաջնահերթության վերանորոգման աշխատանքների իրականացում բյուջեի ու արտաբյուջետային միջոցների հաշվին

Խնդիր 2.2. Առկա ենթակառուցվածքների գույքի և նյութատեխնիկական բազայի թարմացում, նոր 2 ենթակառուցվածքների ավելացում,

Արդյունք 2.2.1. Թարմացված գույք և նյութատեխնիկակական բազայի առկայություն բոլոր դասասենյակներում

Արդյունք 2.2.2. Լաբորատորիաների ապահովում նոր դիտակտիկ պարագաներով։

Արդյունք 2.2.3. Պատշաճ կահավորված և ջեռուցված սպորտդահլիճի առկայություն։

Արդյունք 2.2.4. Էլեկտրոնային գրադարանի հիմնում դպրոցում

Գործողություններ

Կազմել նախահաշիվ անհրաժեշտ ծախսերի համար։

Հայթայթել միջոցներ և ձեռք բերել համապատասխան գույքն ու սարքավորումները։

Գրադարանին մոտ սենյակի առանձնացում, կահավորում որպես էլեկտրոնային գրադարան։

Տարածքում համակարգիչների տեղադրում էլեկտրոնային գրքերից օգտվելու համար։

Սպորտդահլիճի կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում

Խնդիր 2.3. Դպրոցի բակի տարածքում սոցիալական ձեռնարկատիրության՝ այգեգործական փոքր տնտեսության հիմնում մինչև 2025թ.

Գործողություններ

Կազմել նախագծանախահաշվային պլան դպրոցի տարածքում այգեգործություն ունենալու նպատակով։

Հիմնել այգեգործական տնտեսություն և զբաղվել մշակաբույսերի աճեցմամբ։

Տնտեսությունն օգտագործել որպես բուսաբանության առարկայական լաբորատորիա։

Նպատակ 2-ի արդյունքների համար պատասխանատուներն են՝

Կառավարման խորհուրդ, տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, վարչատնտեսական համակարգող, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, հաշվապահ, ծնողական խորհրդի նախագահ, աշակերտական խորհրդի նախագահ։

Նպատակ 3. Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների մասնակցայնության տարեցտարի բարձրացում դպրոցի կառավարմանն ու աշխատանքներին

Խնդիր 3.1. Աշակերտական և ծնողական խորհուրդների կողմից կրթական գործընթացին մասնակցության և վերահսկողության ավելացում շուրջ 30 տոկոսով

Արդյունք 3.1.2. Աշակերտական և ծնողական խորհուրդների կողմից ներկայացվող առաջարկների տարեկան շուրջ 30 տոկոս աճի ապահովում

Արդյունք 3.1.3. Աշակերտական և ծնողական խորհուրդների կողմից նախաձեռնությունների ու միջոցառումների տարեկան շուրջ 30 տոկոսի աճ

Խնդիր 3.2. Կառավարման խորհրդի կողմից կրթական գործընթացին մասնակցության և վերահսկողության ավելացում շուրջ 30 տոկոսով

Արդյունք 3.2.1. Կառավարման խորհդի կողմից ներկայացվող առաջարկների, կատարվող նախաձեռնությունների տարեկան շուրջ 30 տոկոս աճի ապահովում

Խնդիր 3.2. Դպրոցի արտաքին շահակիցների հետ համագործակցության աճի ապահովում տարեկան շուրջ 30 տոկոսով

Արդյունք 3.2.1. Իրականացվում են տարեկան շուրջ 30 տոկոսով ավելի համագործակցային ծրագրեր ոլորտի մարմինների, կրթական ոլորտի կազմակերպությունների և արհեստագործական միությունների, այլ շահագրգիռ կողմերի հետ:

Գործողություններ

Կազմակերպել բաց դռների ամիս ծնողների համար

Ծնողական խորհրդի կողմից պարբերական դասալսումների կազմակերպում:

Իրազեկման միջոցառումների կազմակերպում, որպեսզի կառույցները ավելի լավ տեղյակ լինեն իրենց լիազորություններից:

Հանդիպումների կազմակերպում այլ դպրոցների համապատասխան կառույցների ներկայացուցիչների հետ փորձի փոխանակման համար:

Կրթության ոլորտի կառույցների հետ համատեղ իրականացնել տարեկան առնվազն 3 ծրագիր։

Տարեկան առնվազն 5 տեղական, ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի կնքում։

Նպատակ 3-ի իրականացման պատասխանատուներն են՝

Կառավարման խորհրդի նախագահ, տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, վարչատնտեսական համակարգող, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, հաշվապահ, ծնողական խորհրդի նախագահ, աշակերտական խորհրդի նախագահ։

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

Գործողություն	Պատասխանատու	2023-2024		2024-2025		2025-2026		2026-2027		2027-2028	
		I	II	I	II	I	II	I	II	I	II

Ձևավորել առարկայական խմբակներ	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն										
Ուսումնական որակի հանձնաժողովի ստեղծում	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մանկավարժական խորհուրդ										
Մանսագիտական որակի զարգացման կենտրոնի ստեղծում	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, մանկավարժական խորհուրդ										
Հաստատությունում պարբերաբար դասալսումների իրականացում	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն										
Դասալսումների արդյունքների քննարկում առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ	Տնօրեն, փոխտնօրեններ, մանկավարժական խորհուրդ										

Ուսուցիչների վերապատրաստումների կազմակերպում, ուղարկում	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն										
Շենքային պայմանների ուսումնասիրություն, Նախահաշիվների կազմում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող										
Սպորտդահլիճի կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող										
Ըստ առաջնահերթության վերանորոգման աշխատանքների իրականացում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող										
Հայթայթել միջոցներ և ձեռք բերել համապատասխան գույքն ու սարքավորումներ	Կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող										
Էլեկտրոնային գրադարանի կահավորում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ										
Հիմնել այգեգործական տնտեսություն և զբաղվել	Տնօրեն, վարչատնտեսական										

մշակաբույսերի աճեցմամբ	ն համակարգող, հաշվապահ										
Կազմակերպել բաց դռների ամիս ծնողների համար	Ուսումնական գծով փոխտնօրեն, դաստիարակչակա ն աշխատանքների կազմակերպիչ										
Ծնողական խորհրդի կողմից պարբերական դասալսումների կազմակերպում	Ուսումնական գծով փոխտնօրեն										
Իրազեկման միջոցառումների կազմակերպում	Ուսումնական գծով փոխտնօրեն, դաստիարակչակա ն աշխատանքների կազմակերպիչ										
Հանդիպումների կազմակերպում այլ դպրոցների համապատասխան կառույցների ներկայացուցիչների հետ	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն, դաստիարակչակա ն աշխատանքների կազմակերպիչ										
Կրթության ոլորտի կառույցների հետ համատեղ իրականացնել տարեկան առնվազն 3 ծրագրեր	Կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսակա ն համակարգող, հաշվապահ										
Տարեկան առնվազն 5 տեղական, ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի կնքում	Կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսակա ն համակարգող, հաշվապահ										

Զարգացման ծրագրի իրականացման պատասխանատուները

Քանի որ սույն զարգացման ծրագիրը հանդիսանում է տնօրենի հավակնորդի տեսլականը դպրոցի առաջիկա տարիների զարգացման համար, բոլոր գործողությունների հիմնական պատասխանատուն համարվում է տնօրենը: Ընտրվելու դեպքում ծրագիրը կլինի ուղեցույց առաջիկա հինգ տարիների համար: Բացի տնօրենից ըստ ոլորտների նշված են նաև այլ պատասխանատուներ, ովքեր հաշվետու են տնօրենին: Տնօրենն էլ իր հերթին հաշվետու է կառավարման խորհրդին: Կատարված աշխատանքների ընթացքից ու որակից ելնելով հնարավոր են որոշակի փոփոխություններ պատասխանատուների մասով:

Արդյունքների գնահատման չափանիշները

Գործողություն	**Գնահատման չափանիշ**	**Վերահսկման մեխանիզմ**
Ձևավորել առարկայական խմբակներ	Առարկայական խմբակների քանակ Խմբակների մասնակից աշակերտների քանակ Օլիմպիադաների մասնակցության քանակ Մրցանակային տեղերի քանակ	Խմբակների մանսակիցների ցուցակ Օլիմպիադաների մասնակիցների ցուցակ Մրցանակների դիտարկում
Ուսումնական որակի հանձնաժողովի ստեղծում	Հանձնաժողովի ձևավորման արձանագրություն Նիստերի արձանագրություններ Գործունեության հաշվետվություններ	Արձանագրությունների և հաշվետվությունների դիտարկում Գործունեության արդյունքների դիտարկում Աշակերտների

		առաջադիմության դիտարկում
Մանսագիտական որակի զարգացման կենտրոնի ստեղծում	Կենտրոնի ձևավորման արձանագրություն Նիստերի արձանագրություններ	Աշակերտների առաջադիմության դիտարկում
Հաստատությունում պարբերաբար դասալսումների իրականացում	Դասալսումների արձանագրություններ Կատարված առաջարկների քանակ	Արձանագրությունների ու առաջարկների դիտարկում, ուսումնասիրություն
Դասալսումների արդյունքների քննարկում առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ	Նիստերի արձանագրություններ	Արձանագրությունների ու առաջարկների դիտարկում, ուսումնասիրություն
Ուսուցիչների վերապատրաստումների կազմակերպում, ուղարկում	Վերապատրաստման մասնակցած ուսուցիչների քանակ Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների քանակ	Մասնակցության վկայականների դիտարկում Կամավոր ատեստավորման արդյունքների

		դիտարկում
Շենքային պայմանների ուսումնասիրություն	Նախահաշիվների առկայություն	Նախահաշիվների ուսումնասիրություն
Սպորտդահլիճի կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում	Սպորտ դահլիճի գույքի առկայություն Ջեռուցման համակարգի առկայություն	Տարածքի դիտարկում
Ըստ առաջնահերթության ԿԱՊԿՈՒ և այլ դասարանների վերանորոգման աշխատանքների իրականացում	Վերանորոգված սենյակների քանակ	Դիտարկում
Հայթայթել միջոցներ և ձեռք բերել համապատասխան գույքն ու սարքավորումներ	Հայթայթված միջոցների ծավալ Ձեռքբերված գույքի ու սարքավորումների քանակ	Փաստաթղթերի դիտարկում Լուսանկարների դիտարկում
էլեկտրոնային գրադարանի կահավորում	Համակագիչների առկայություն Էլեկտրոնային ռեսուրսների առկայություն	Փաստաթղթերի դիտարկում Լուսանկարների դիտարկում
Այգեգործական տնտեսության հիմնում և	Բերքի քանակ Դպրոցի համար գեներացված	Փաստաթղթերի դիտարկում

մշակաբույսերի աճեցում	տարեկան եկամտի մեծություն	
Կազմակերպել բաց դռների ամիս ծնողների համար	Արձանագրություններ	Արձանագրություններ դիտարկում
Ծնողական խորհրդի կողմից պարբերական դասալսումների կազմակերպում	Դասալսումների արձանագրությունների քանակ Կատարված առաջարկների քանակ	Արձանագրություններ դիտարկում
Իրազեկման միջոցառումների կազմակերպում	Կատարված առաջարկների աճ	Արձանագրություններ դիտարկում
Հանդիպումների կազմակերպում այլ դպրոցների համապատասխան կառույցների ներկայացուցիչների հետ	Կատարված առաջարկների, իրականացված նախաձեռնությունների աճի տոկոս	Փաստաթղթերի, լուսանկարների դիտարկում
Կրթության ոլորտի կառույցների հետ համատեղ իրականացնել տարեկան առնվազն 3 ծրագրեր	Ծրագիր-առաջարկների քանակ Իրականացված ծրագրերի հաշվետվությունների քանակ	Փաստաթղթերի, լուսանկարների դիտարկում
Տարեկան առնվազն 5 տեղական, ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի կնքում	Ծրագիր-առաջարկների քանակ Իրականացված ծրագրերի հաշվետվությունների քանակ	Փաստաթղթերի, լուսանկարների դիտարկում

Վերահսկողության մեխանիզմները

Վերոնշյալ գնահատման չափանիշների համար գործունեության վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված պետական կառավարման այլ մարմիններ, իսկ անմիջապես զարգացման ծրագիրը վերահսկում է կառավարման խորհուրդը:

Յուրաքանչյուր իրականացվող ծրագրի, միջոցառման համար հաստատված ձևաչափերով ներկայացվելու են հաշվետվություններ վերադաս մարմիններին, որոնք համապատասխան գնահատման չափանիշներով կգնահատեն կատարված աշխատանքի որակական ու քանակական կողմերը: Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի մասնակցային սկզբունքով՝ ներգրավելով բոլոր շահակից կողմերին ինչպես հաստատության ներսից, այնպես էլ արտաքին համագործակցող կողմերից:

Ռիսկերը

Նպատակի անվանում	**Նպատակից ու խնդիրներից բխող ռիսկեր**	**Ռիսկերի մեղմող հնարավոր գործողություններ**
Նպատակ 1. Ամասիայի միջնակարգ դպրոցում 5 տարիների ընթացքում ապահովել կրթության որակի շարունակական բարելավմանն ուղղված նպաստավոր միջավայր	Նպատակի իրականացման հետ կապված հիմնական ռիսկերը կապված են դպրոցի մանկավարժական ու վարչական համակազմի կողմից դիմադրության, ծնողական ու աշակերտական խորհուրդների կողմից անտարբերության, կատարվող փոփոխությունների նկատմամբ վերապահումների հետ	Նշված ռիսկերի մեղմման համար տնօրենի կողմից կիրականացվեն պարբերական ուղղորդող, մոտիվացնող գործողություններ, կկիրառվեն խրախուսման մոտեցումներ, կստեղծվի փոխվստահության միջավայր

Նպատակ 2. Դպրոցի ենթակառուցվածքների զարգացում	Այս նպատակի հիմնական ռիսկերը կապված են համապատասխան նյութատեխնիկական ապահովվածության, միջոցների սղության կամ բացակայության հետ	Նշված ռիսկերի մեղմման համար տնօրենի ու աշխատակազմի կողմից կներդրվեն առանձնահատուկ ջանքեր, կօգտագործվեն մարդկային հնարավոր բոլոր ցանցերը՝ ի նպաստ դպրոցի զարգացման։
Նպատակ 3. Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների մասնակցայնության տարեցտարի բարձրացում դպրոցի կառավարմանն ու աշխատանքներին	Այս նպատակի ու խնդիրների իրականացման հիմնական ռիսկերը կապված են արտաքին շահակիցների կողմից դպրոցի ընկալման փոփոխության դժվարության, ինչպես նաև համատեղ աշխատանքի պատրաստակամության հետ։	Նշված ռսիկերի մեղմման համար տնօրենի կողմից կկիրառվեն համագործակցային մոտեցումների, թիմային աշխատանքի կազմակերպման, առաջնորդության բազմաթիվ հետաքրքիր մոտեցումներ, ինչպես նաև կօգտագործվեն

		մարդկային ու գործնական բոլոր կապերը։

Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները հանդիսանալու են դպրոցի բյուջետային ու արտաբյուջետային միջոցները, որոնք ներդրվելու են հաստատության բնականոն զարգացման ու շարունակական կենսագործունեություն ապահովելու համար: Նյութատեխնիկական պարագաները ձեռք են բեվելու՝ հիմնվելով համապատասխան գործողության համար անհրաժեշտությունից, մասնավորապես, մարզադահլիճի կահավորման, ԿԱՊԿՈՒ դասարանի գույքի ձեռքբերման, լաբորատորիաների համար անհրաժեշտ կահավորումից, նյութերից, այգեգործության տնտեսության հիմնման, համակարգչային դասարանում տեխնիկական սարքավորումներից և այլն: Ելնելով յուրաքանչյուր գործողության առավել մանրամասն պլանավորման առկայությունից՝ տարեկան աշխատանքային պլանում կնախատեսվեն և բյուջետային կամ արտաբյուջետային միջոցներից, մինչ այժմ կատարված խնայողություններից, հայթայթված ֆինանսավորման աղբյուրներից ձեռք կբերվեն յուրաքանյչյուր գործողության իրականացման համար անհրաժեշտ միջոցները;